

ի հոգեւոր երանութիւնն. մարդկօրէն
մնաւ և արհամարհելի եցոյց զփառս և
զպատիւ աշխարհի, վասնորոյ տարաւ և
համբեր ամենայն դառնութեան և ան-
շուք կենաց, զի յաղթեաց օրինօք իշ-
խանին խաւարի, զի պտուղք խոնարհու-
թեանն՝ բուսուսցէ զծառն պտղաբե-
րիչ կենդանութեան և փրկութեան
համայն աշխարհի, փոխանակ ծառոյն գի-
տութեան բարւոյ և չարի, որով բնու-
թիւն մարդոյն եմթարկեցաւ պարտու-
թեան:

ԼՆՅ՝ բարձրացաւ դրօշակ խաչին ՚ի
Վողգոթայ, ոչ զի յաղթեաց թշնամին
խաչին, այլ զի պատկառեսցի և նուա-
ճեսցի յանսահման խոնարհութենէ Որդ-
ւոյն Լստուծոյ. զայս խորհուրդ ան-
մատչելի ՚ի մարդկային ըմբռնողութենէ,
զայս տնօրէնութիւն Լստուածահրաշ-
ժանուցեալ սուրբ Հեգլով Լկեղեցին
Լստուծոյ՝ հնչեցուցանէ յունկն որդ-
ւոց իւրոց, ասելով "Խորհուրդ մեծ
և սքանչելի, որ յայսմ աւուր յայտ-
նեցաւ": Վանդի անծինն ծնաւ լու-
ծեալ զկնիք անքննին խորհրդոյ նախ-
գուշակութեմ մարգարէիցն, զի զծնուն-
դըս Լգամայ ծնանիցի ՚ի կեանս փրկա-
ւորս տնօրէնութեամբն իւրով:

Լս մեք որդիքս սրբոյ Լկեղեցւոյ,
համագումարեալք առաջի Սրբազնագոյն
Վահանայապետիդ և Վրկայդ նորին
սրբոյ Լկեղեցւոյ, կրեալ ՚ի սրտի զա-
ւետումն հոգեւոր ուրախութեան՝ ցըն-
ծամք յաւերժական ուրախութեամբ:

զսրբոյ Լկեղեցւոյն կրկնելով ՚ի հոգիս
մեր զսքանչելի յայտնութեանն ճայնար-
կութիւն, զի խորհուրդն անհաս և ան-
սկիզբն յայտնեցաւ մեզ հոգեղինայս, և
մարդիկ համադասեցան ընդ որդիս լու-
սոյ ընդ հրեշտակս Լստուծոյ, որդե-
գրութեամբ Հօրն երկնաւորի, ծնըն-
դեամբ Փրկչին աշխարհի, և ՚ի վերամ-
բարձ միտս հարկեալ խոնարհական երախ-
տագիտութեամբ առ կարգեալդ Եւս-
տուծոյ Պետ և Հայր հարսնացելոյն
իւրահաստատ Լկեղեցւոյ՝ կարգամբ
միաբան "Շ Նորհաւոր" անունդ և Սկըր-
տութիւն Վրկստոսի". որով հերձաւ
վարագոյր խաւարի, և բարձաւ թագա-
ւորութիւն մահու և դժոխոց, և որով
ծնանելոց էին մարդիկ ՚ի կեանս ծնըն-
դեամբ Սրբոյ աւաղանին հաստատելոյն
նախայաւիտեան ժամանակաւ:

Ի 6-Ն ԹՎ
1369 թի
Ի Ս. Եւմովին:

Փիլիպպոս Նիրանեան

ԼՂԷ՝ քսանդրապօլոյ Հայոյ Լգգային
հոգեւոր Վպրոցի ուսուցիչը ՚ի դիմաց
աշակերտաց հետեւեալ շնորհակալու-
թեան գիրը ուղղած է առ Լգգասէր
Պ. Սկրտիչն Սանասարեանց:

... Պատուական ամսագրոյն
"Լրարատայ":

Իւրաքանչիւր ազգասիրական գործ
իւր արդիւնաւորութեանը համեմատ
արժանի է գովեստից և երախտագիտա-
կան զգացմանց, շնորհակալութեան ընդ-
հանուր ազգի, մանաւանդ նոցա, որոց
վերայ յատկապէս կ'աւարածի նոյն չք-
նաղ առաքելութեան աշնիւ և գովելի

շնորհն, և որովհետեւ աղգասիրական գործոց հանդիսին մէջ առաջին տեղերը ունի այն առատաձեռնութիւնը, որ աղգայնոց մատաղահաս և լուսակարօտ մանկանց միջոց կ'ընին դիմելու դէպի աստուածահաճոյ և կենցաղօգուտ գիտութեան և բարեկիրթութեամբ արակութեան մշտապայծառ տաճարը, որով և իւրեանց ուսման անձկաւէտ իղձը լցուցանելով, կ'պատրաստուին նոքա հանդիսանալ պիտանացու անդամներ լճգի և լակեղեցւոյ ևս և ընդհանուր մարդկութեան, նաև փառք և պարծանք հայրենեաց. ուստի սեպուհ և նուիրական պարտաւորութիւն կայ այնպիսի արժանագով առատաձեռնութեան քաղցրաձաշակ և անմահ պտուղներն վայելողայ վերայ, որ իւրեանց լիափրտ գոհունակութեան և երախտագիտութեան զգացմունքը հրապարակաւ նուիրեն այն հոյակապ անձանց, որոց բարեսէր սրտերուց բղխած են այդպիսի նախանձելի առաքինութիւններն, վասն որոյ և այս իսկ պատճառաւ տեղւոյս ծխական Հոգեւոր դպրոցը ստանալով աղգասէր Պ. Սկրտիչ Սանասարեանցից նուիրած տարեկան երկու բաժին ամսագիրներէն տասն և հինգ* տետրակ անցեալ ամիսներուն համար, և աներկբայ լինելով, որ այսուհետեւ ևս պէտք է ստանայ ամսոյ ամիս ըսա կարգին, պարտք կ'համարի "Լրարատիդ միջոցաւ" ի լուր աղգայնոց մատուցանել նոյն բարեհամբաւ

* Մայիսէն մինչև դեկտեմբեր կու օրին յետմէ պէտ 16 հատ պէտք էր լինէր, բայց որովհետեւ առաջին երեք ամիսներ ը 1300ական օր. տպուած էր, որ յետոյ պակսելով կրկին հազարական օր. տպելու հակադրուեցանք. ինչպէս որ մայիս, յունիս և դեռ նոր յուլիսն ևս տպեցինք, որ շատ տեղեր չօղորդուած գոյով, այսուհետեւ կը զրկենք իսկ պ. Ս. սանասարեանցին նուիրած դպրոցաց մի մի օրինակ խրկած ենք, վասն զի նոյն միջոցները հինգ վեց հատ առանձին պահած ունէինք:

աղգասիրին իւր երախտագիտական շնորհակալութեան խորին զգացմունքը:

Լ. յո, դորա պանծալի անունը քաղցր և անմոռաց յիշատակաւ անմահ պէտքէ մնայ սոյն դպրոցի աշակերտելոց սրտից մէջ, որ ի կարգի ուղիշ հայկական ուսումնարանաց սորան ևս բարեհաճել է իւր աղգասիրական բարերարութիւնից բաժին հանել. սոցա մանկական աղօթից քաղցր միմունքը պիտի հանապաղ սլանան դէպի երկինք Լ. մենաբարւոյ գերապայծառ օթեանը դոյն հայրենասէր բարերարի աղօթօգուտ կենաց համար երկարամեայ կենդանութիւն և բարեբաղդութիւն մաղթելու:

Ո՛հ, հազար երանի էր տառապեալ մօրն մեր Հայաստանի, եթէ բաղմապատկէր այդպիսի նախանձելի և հազուագիւտ աղգասիրաց թիւը նորա գալուոր տրտմութիւնը փարատելուն համար որուն և մնամ մշտապէս փափաքող անձկաւէտ սրտիւ

Ուսուցիչ վերտոգեալ դպրոցին
Մկրտիչ Արարչեանց:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՅՈՒՄ

Ս. Լճմիաճնի կալուածք՝ Ս. աղարշապատ, Լճուարդ, () շական, Ս. Կաստուրայ և Ս. Ղրի գիւղօրայքը և աւերակ գիւղատեղին Ղաթսրգեղայ՝ իւրեանց պատկանեալ սահմանօք հանդերձ, կապալով կը տրուին: Ուստի կը հրատարակեմք ի գիտութիւն Լճայնոց որ ի Ս. Կաստան, որպէս զի գանկացողք օրինաւոր գրաւականօք փութան ներկայ գտանուիլ աճրդախօսութեանց, որ պիտի լինի յառաջակայ ապրիլ 7 նին և 9 նին ի Ս. Լճմիաճին:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱՇՆԻ